ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

2025Թ. ՀՈՒԼԻՍԻ 7-ԻՑ 9-Ը ԲԵԼԳԻԱՅԻ ԹԱԳԱՎՈՐՈՒԹՅՈՒՆ (Ք. ԲՐՅՈՒՍԵԼ) ԳՈՐԾՈՒՂՄԱՆ

1. <u>Անունը, ազգանունը՝</u>

Արմեն Սիմոնյան

2. <u>Զբաղեցրած պաշտոնը՝</u>

Հայաստանի Հանրապետության տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարի տեղակալ

3. <u>Գործուղման վայրը և ժամկետները.</u>

2025թ. հուլիսի 7-ից 9-ը Բելգիայի Թագավորություն (ք. Բրյուսել)

4. <u>Հրավիրող կողմը.</u>

Եվրոպական Միություն

5. <u>Գործուղման նպատակը (աշխատանքային ո՞ր խնդրի լուծման համար էր նախատեսված գործուղումը).</u>

ՀՀ-ԵՄ Գործընկերության կոմիտեի վեցերորդ նիստին մասնակցելու նպատակով

6. <u>Քննարկված թեմաները.</u>

Հանդիպման ընթացքում քննարկվել են Հայաստանի Հանրապետության և Եվրոպական միության համագործակցության խորացման, եվրոպական համայնքին Հայաստանի ինտեգրման, տնտեսական կապերի զարգացման նպատակով

իրականացվող քաղաքականության և Հայաստանում անվտանգ և ապահով էներգետիկ և տրանսպորտային համակարգեր ստեղծելու գործընթացներին վերաբերող թեմաներ:

7. Հանդիպումները, ելույթները, բարձրացված կամ քննարկված հարցերը.

Միջոցառման ընթացքում քննարկել են Եվրոպական միության երկրների համագործակցության հեռանկարների, ինչպես նաև տնտեսական և տրանսպորտային կապերի զարգացման վերաբերյալ:

Անդրադարձ է կատարվել ՀՀ էներգետիկ ոլորտում կատարվող բարեփոխումների և ԵՄ օրենսդրության հետ մոտարկմանը՝ համաձայն ՀԸԳՀ-ի, վերականգնող էներգետիկայի բնագավառի արդիականության, ատոմակայանի անվտանգության ապահովման և համապատասխան տեխնիկական զննումներ անցկացնելու կարևորությունը, տարածաշրջանային փոխկապակցվածության խրախուսման նպատակով Հայաստանի մասնակցությունը Կովկասյան փոխանցման ցանցի (Caucasian Transmission Line) ծրագրին ՝ համաձայն Սևծովյան ռազմավարության:

Նիստի ընթացքում անդրադարձ է եղել ՀՀ կառավարության կողմից առաջարկված «Խաղաղության խաչմերուկ» նախագծին, ինչպես նաև ՀՀ հետաքրքրությանը՝ մասնակցելու տրանսկասպիան միջանցքին:

Հանդիպման ընթացքում քննարկվել են նաև Ավիացիայի ոլորտում ՀՀ ստանդարտները ԵՄ անվտանգության ստանդարտներին համապատասխանեցնելուն ուղղված ԵՄ աջակցության ծրագիրը, ինչպես նաև օրակարգում ներառված այլ հարցեր:

8.Հանդիպման կամ հավաքի ժամանակ ընդունված որոշումները, պայմանավորվածությունները, ստորագրված փաստաթղթերը.

Ստորագրված փաստաթղթեր չկան:

9. Առաջարկությունները, դրանց ընթացք տալու վերաբերյալ առաջարկները՝ եղանակը, ձևը, ժամկետները, պատասխանատուները, ակնկալվող արդյունքները.

10. Ստորագրությունը, ամսաթիվը

14.07.2025թ.